# ՍՏԵՓԱՆ ԱՎԱԳՅԱՆԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ
# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
## Հունիսի 28 - Հուլիսի 4, 2025

Հայաստանի շախմատի ակադեմիան Շախմատի ակադեմիայի ակումբի հետ համատեղ 2025թ. հունիսի 28-ից հուլիսի 4-ը կազմակերպում է Ստեփան Ավագյանի հուշամրցաշարը՝ պատանեկան միջազգային մրցաշար, տարբեր տարիքային խմբերով, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: Հուշամրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է **2,100,000 ՀՀ դրամ**: Մրցաշարերում 1-3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն մեդալներով և պատվոգրերով:

Մրցաշարի անցկացման վայրը՝ քաղաք Ջերմուկ, «Ջերմուկ Աշխարհ» առողջարանային համալիր:

**Մինչև 18տ. պատանիներ և աղջիկներ**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 220 000 |
| 2-րդ տեղ | 170 000 |
| 3-րդ տեղ | 150 000 |
| 4-րդ տեղ | 120 000 |
| 5-րդ տեղ | 80 000 |
| 6-րդ տեղ | 50 000 |
| 7-րդ տեղ | 50 000 |

**Հատուկ մրցանակներ**

| | |
|---|---|
| Մինչև 18տ. աղջիկ | 50 000 |
| Մինչև 14տ. աղջիկ | 40 000 |
| Մինչև 14տ. տղա – 1-ին տեղ | 70 000 |
| Մինչև 14տ. տղա – 2-րդ տեղ | 50 000 |
| Լավագույն արդյունք օտարերկրյա մասնակիցների միջև | 30 000 |
| Լավագույն արդյունք ակադեմիայի սաների միջև | 40 000 |

**Մինչև 12տ. պատանիներ և աղջիկներ**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 120 000 |
| 2-րդ տեղ | 100 000 |
| 3-րդ տեղ | 70 000 |
| 4-րդ տեղ | 50 000 |
| 5-րդ տեղ | 50 000 |

**Հատուկ մրցանակներ**

| | |
|---|---|
| Մինչև 12տ. աղջիկ | 40 000 |
| Մինչև 10տ. աղջիկ | 30 000 |
| Մինչև 8տ. աղջիկ | 25 000 |
| Մարզերից լավագույն արդյունք ցույց տված մասնակից մինչև 12տ. խմբում | 20 000 |
| Մարզերից լավագույն արդյունք ցույց տված մասնակից մինչև 10տ. խմբում | 15 000 |
| Մարզերից լավագույն արդյունք ցույց տված մասնակից մինչև 8տ. խմբում | 10 000 |

**Մինչև 10տ. պատանիներ և աղջիկներ**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 100 000 |
| 2-րդ տեղ | 80 000 |
| 3-րդ տեղ | 60 000 |
| 4-րդ տեղ | 50 000 |
| 5-րդ տեղ | 40 000 |

**Մինչև 8տ. պատանիներ և աղջիկներ**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 50 000 |
| 2-րդ տեղ | 30 000 |
| 3-րդ տեղ | 20 000 |
| 4-րդ տեղ | 10 000 |
| 5-րդ տեղ | 10 000 |

**Բոլոր մրցանակները հարկվելու են ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն:*

**Հիմնական և հատուկ մրցանակների հավասարության դեպքում մասնակցին կտրվի հիմնական մրցանակը:*

**Հատուկ մրցանակների դիպլոմները և մեդալները անկախ գումարից կտրվեն լավագույն արդյունք ցույց տվողներին:*

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը որոշվում են ըստ՝

ա)հատված Բուխհոլցի (-1) գործակցի,

բ)Բուխհոլցի գործակցի,

գ)ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի

դ)ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,

ե)հաղթանակների առավելագույն քանակի:

## ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Մինչև 18 տարեկան պատանիների և աղջիկների խմբում մասնակցելու իրավունք ունեն շախմատի որակավորման առաջին կարգ, ազգային և միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստները: Մրցաշարում կհաշվարկվի ազգային և միջազգային վարկանիշ:

**Միայն ՖԻԴԵ-ի նույնականացման համար ունեցող շախմատիստները կարող են մասնակցել մրցաշարին: ՖԻԴԵ-ի նույնականացման համար** չունենալու դեպքում մինչև հունիսի 23-ը դիմեք Հայաստանի շախմատի ֆեդերացիա կամ այցելեք հետևյալ հղումով՝ **https://chessfed.am/am/fide-registration-form**:

**Մինչև 12տ. պատանիներ և աղջիկներ**՝ առնվազն II կարգ (2014թ.ծնված և մարզերից մասնակիցների համար՝ III կարգ)

**Մինչև 10տ. պատանիներ և աղջիկներ**՝ առնվազն III կարգ (2016թ.ծնված և մարզերից մասնակիցների համար՝ IV կարգ)

**Մինչև 8տ. պատանիներ և աղջիկներ**՝ առնվազն IV կարգ (2018թ.ծնված և մարզերից սահմանափակ քանակով ոչ կարգային):

Մինչև 10 և 12 տարեկան պատանիների և աղջիկների խմբերում կհաշվարկվի ազգային վարկանիշ:

## ԺԱՄԱԿԱՐԳ

Մինչև 18 և 12 տարեկան պատանիների և աղջիկների խմբում 90 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

Մինչև 10 և 8 տարեկան պատանիների և աղջիկների խմբում 60 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է **30 րոպե**:

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ամսաթիվ | Տուր | Ա և Բ մրցաշարեր |
|---|---|---|
| 28 հունիսի | բացման արարողություն | **15:00** |
| 28 հունիսի | I | 16:00 |
| 29 հունիսի | II | 10:30 |
| 30 հունիսի | III | 10:30 |
| 30 հունիսի | IV | 16:00 |
| 1 հուլիսի | V | 10:30 |
| 2 հուլիսի | VI | 10:30 |
| 2 հուլիսի | VII | 16:00 |
| 3 հուլիսի | VIII | 10:30 |
| 4 հուլիսի | IX | 10:30 |
| 4 հուլիսի | փակման արարողություն | **17:00** |

## ԳՐԱՆՑՈՒՄ

Մասնակիցների գրանցումը կատարվում է օնլայն տարբերակով: Մրցաշարի պաշտոնական կայքէջում անհրաժեշտ է սեղմել ԳՐԱՆՑՎԵԼ կոճակին, լրացնել բոլոր դաշտերը և կատարել

վճարումը: Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել Շախմատի ակադեմիայի ակումբի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 1570091773770100
ՀՎՀՀ՝ 02308854

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել **մասնակցի անունը և ազգանունը, ծննդյան տվյալները, կարգը, հեռախոսահամար, տարիքային խումբ, Ստեփան Ավագյանի հուշամրցաշարի մասնակցության վճար**:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

***Մասնակիցների և մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:**

- Ակադեմիայի բոլոր սաների համար մուտքավճարները կզեղչվեն **20%**-ով,
- Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարին մասնակցած ակադեմիայի սաների համար մուտքավճարները կզեղչվեն **50%**-ով,
- Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնությունում 1-3-րդ տեղեր զբաղեցրած ակադեմիայի սաների համար մասնակցությունը **անվճար** է:

***Մուտքավճարների ետ վերադարձի դեպքում կկատարվի 20% պահում:**

## ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

| **Մասնակիցներ** | **մինչև 30.05.2025** | **մինչև 23.06.2025** | **մինչև 27.06.2025** |
|---|---|---|---|
| **Մինչև 18տ. /2000 և ավել միջ. վարկանիշ/** | 10 000 | 15 000 | 20 000 |
| **Մինչև 18տ. /2000-ից ցածր միջ. վարկանիշ/** | 15 000 | 20 000 | 25 000 |
| **Մինչև 18տ. /I կարգ/** | 20 000 | 25 000 | 30 000 |
| **Մինչև 12տ.** | 10 000 | 15 000 | 20 000 |
| **Մինչև 10տ.** | 10 000 | 15 000 | 20 000 |
| **Մինչև 8տ.** | 10 000 | 15 000 | 20 000 |

## ՀՅՈՒՐԱՆՈՑ /3 անգամյա սնունդով 1 անձը/

| **Հյուրանոց** | **Մասնակից** | **Ուղեկցող անձ** |
|---|---|---|
| Գրանդ Ռեզորթ Ջերմուկ /մինչև 12տ. անվճար/ | 20 000 | 20 000 |
| Արմենիա առողջարան /մինչև 7տ. անվճար/ | 10 000 | 15 000 |
| Մոսկվա հյուրանոց /մինչև 5տ. անվճար/ | 10 000 | 15 000 |
| Ջերմուկ Աշխարհ /մինչև 5տ. անվճար/ | 15 000 | 15 000 |

**Մրցաշարի կազմակերպչական հարցերով /գրանցում, հյուրանոց, տրանսպորտ/ դիմել՝ Հայաստանի շախմատի ակադեմիա** Հեռ.՝ +374 10 44 84 73, բջջ.՝ +374 43 44 84 73 /գրանցում/, +374 91 19 25 14 /հյուրանոց, տրանսպորտ/:
Պաշտոնական կայքէջ՝ **jermuk.chessacademy.am**
Էլ.հասցե՝ **tournaments@chessacademy.am**

**Մրցաշարի տնօրեն**
Վարդուհի Սարգսյան